02/10.1/17134-17
2017-07-27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-026-19.06.2017-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 814-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-026-19.06.2017-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի նախագիծ) 1-ին հոդվածը՝ հետևյալ հիմավորմամբ՝

Օրենքի նախագծով նախատեսվում է խմբագրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնը՝ սահմանելով, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև իր վկայակոչած այլ փաստերը, եթե օրենքով այդ փաստն ապացուցելու պարտականությունն այլ անձի վրա դրված չէ:

Քաղաքացիական դատավարությունում, բացի ապացուցման ընդհանուր կանոններից, գործում են նաև հատուկ կանոններ, որոնք ազդում են ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու վրա:

Նյութական և դատավարական օրենսդրական նորմերով սահմանվում են ապացուցողական կանխավարկածներ, այսինքն՝ փաստեր, որոնք համարվում են ապացուցված, եթե մյուս կողմը չի հերքում դրանց գոյությունը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն, պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը

պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները, իսկ մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Այսինքն, եթե հայցվորը վկայակոչում է, որ վնասը պատճառվել է պատասխանողի մեղքով, ապա պատասխանողը պետք է ապացուցի ոչ թե հայցվորի վկայակոչած, այլ դրա հակառակ փաստը, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Նշված և այլ համանման ապացուցողական կանխավարկածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի կողմի վրա կարող է դրվել մյուս կողմի վկայակոչած փաստի հակառակը, այլ ոչ թե վկայակոչած փաստն ապացուցելու պարտականություն:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի նիստում հավանության արժանացած և 01/10.2/15353-17 06.07.2017 թ. գրությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով քննարկվող ապացուցողական կանխավարկածներն ստացել են իրավական ամրագրում:

Մասնավորապես, նշված օրենսգրքի նախագծի 58-րդ հոդվածով սահմանվել է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Առաջարկվող փոփոխությունը չի բխում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված, քաղաքացիական դատավարությունում ձևավորված և կիրառվող ապացուցման պարտականությունը բաշխելու

կանոններից, ապացուցողական կանխավարկածներից և կարող է քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացում առաջացնել գործնական խնդիրներ:

Բացի դրանից, հարկ է նշել, որ ինչպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի ներկայիս խմբագրությամբ 48-րդ հոդվածի 1-ին մասի, այնպես էլ նույն հոդվածի՝ օրենքի նախագծով առաջարկող խմբագրության վերլուծությունից բխում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր կողմից վկայակոչված ցանկացած հանգամանք: Մինչդեռ, կոնկրետ գործով ապացուցման առարկան որոշելիս և գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելիս, ուշադրության է արժանի վկայակոչված փաստերի իրավական նշանակության հարցը: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Հետևաբար, կոնկրետ գործով ապացուցման առարկան են կազմում և դատարանի կողմից հետազոտման, իսկ գործին մասնակցող անձանց կողմից՝ ապացուցման կարիք ունեն ոչ թե վկայակոչված բոլոր փաստերը, այլ միայն նրանք, որոնք գործի լուծման համար ունեն էական նշանակություն: Հենց այս տրամաբանությունն է դրված նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով առաջարկվող կարգավորման հիմքում: